ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կանոնակարգի 10 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում, այն է՝ «Սահմանադրության 100 հոդվածի 3.1. (բացառությամբ մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ հարցերի), 4-րդ և 6-րդ կետերում նշված հարցերով ներկայացված դիմումների նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ ուշ, քան դիմումի գրանցումից 24 ժամ հետո», «դիմումի գրանցումից» բառերը փոխարինել «դիմումի նախնական ուսումնասիրումը սահմանադրական դատարանի նախագահի կողմից սահմանադրական դատարանի անդամին (անդամներին) հանձնարարելուց» բառերով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21 մայիսի 2007 թվականի
ՍԴԱՈ-64